

չի թող, այլ ամայի եւ խոսպան դարձոյց եւ  
 էած աւեր. եւ ասին թէ վասն այն սուղ է  
 ապրչմեղէնն. զի ոչ թութի ծառ մնաց, ոչ  
 պօճիկ. զամէնն քանդեց Մանօղլին: Եւ եր-  
 րորդունմն ամին գնաց նա առ Փափն եւ մկրը- 145  
 տեալ եղեւ քրիստոնեայ. եւ Փափն երեստ  
 չինդ զատրդայ զօրօք յօգնութիւն. եւ նա եկեալ  
 բազում կղզիս եւ քաղաքս տապալէր եւ կոր-  
 ծանէր. այլ եւ զԱյա Փայաս, Տրապուլուն եւ  
 զայլ ծովեղերայս եւ եալուն եւ սկէլէս տիրա- 150  
 պետեայ. եւ զարձեալ գնաց ի Հոռոմ եւ անդր  
 վախճանեցաւ: Իսկ յետ նորա որդին ա՛յլ ա-  
 բխագոյն երեւեցաւ եւ լաւ անուն ժառանկեաց:

Եկեսցուք ի բանն մեր. զի տվաք Համա  
 մէկ մէկ ոռույ: Եւ անտի եկաք խան մի, ուր 155  
 չինդական փարայ առին: Անտի հասաք ի  
 խան ԹՈՒՄԱՅ. եւ անդ օթեցաք, զի մեծ խան  
 էր, վրմաչէն եւ զեղեցիկ. եւ մեծ գետ մի  
 առջեւովն կ'երթայր:

#### ՀԱԼԷՊ

Եւ անտի անցաք մէկ օրն ի հռչակաւոր  
 եւ մեծահամբաւ մայրաքաղաքն Հալապ<sup>1</sup>. եւ  
 Հոգեւոր Տէրն տարաւ զմեզ ընդ իւր ի Դար-

144 քանթեց: — 152 յարիագոյն: — 155 եկաք  
 չիբ: — 157 յօթեցաք:

1 հռչակաւոր:

<sup>1</sup> Հալէպի նուիրուած այս գլուխը գրեթէ ամբողջ-  
 օթեամբ յառաջ բերած էինք «Հանդէս Ամսօրեայ»,  
 1933, էջ 307—308 եւ 318—319: Հոն խօսած ենք նաեւ  
 Ս. Բառասնից եկեղեցւոյ նորոգութեան եւ Պետիկ-  
 Պետրոս եւ Սանոս եղբարց դարձունէութեան վրայ (էջ  
 309—333):